

Ձորամուտ համայնք

Ընդերքօգտագործման բնագավառ

1. Գործառույթը՝

- 1) ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուլտիվացիայի ծրագրի համաձայնեցում,
- 2) համայնքի ավագանու որոշման հիման վրա, ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտագործման պայմանագրի կնքում,
- 3) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով պահանջվող հողամասի (հողամասերի) նպատակային նշանակության փոփոխման համար որոշման կայացում,
- 4) ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ՝ հողերի օգտագործման մասին որոշման կայացում:

2. Գործառույթի իրականացման օրենսդրական հիմքը՝

- 1) Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մաս,
- 2) ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մաս և 83-րդ հոդվածի 1-ին մաս,
- 3) <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենք,
- 4) ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետեր,
- 5) ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2011թ. դեկտեմբերի 30-ի N249-Ն հրամանով հաստատված N1 հավելվածի 5-րդ և 6-րդ կետեր:

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է Պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1. Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վե-	Համայնքի վարչական					

<p>րական գնմանն ուղղված (անվտանգ և օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուսիվացիայի ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 750-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան կազմված և համաձայնեցման ներկայացված ծրագրին՝ հավանություն տալու համար 2-ամսյա ժամկետի պահպանում</p>	<p>տարածքում սպառված պաշարներով հանքավայրերի չկան:</p>					
<p>2. Ընդերք օգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտագործման պայմանագրի կնքման նպատակով համայնքի ավագանու որոշման կայացման համար 2-ամսյա ժամկետի պահպանում</p>	<p>Համայնքում տվյալ գործառույթներ չեն իրականացվել:</p>					
<p>3. Ընդերք օգտագործման իրավունք ունեցող անձանց դիմումի հիման վրա՝ համայնքի ավագանու որոշման առկայության դեպքում, համայնքի ղեկավարի կողմից հողօգտագործման պայմանագրի կնքման համար 10-օրյա ժամկետի պահպանում</p>	<p>Համայնքում տվյալ գործառույթներ չեն իրականացվել:</p>					

<p>4.Ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց դիմումի հիման վրա՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով պահանջվող հողամասի (հողամասերի) նպատակային նշանակության փոփոխման համար որոշման կայացման 5-օրյա ժամկետի պահպանում</p>	<p>Համայնքում տվյալ գործառույթներ չեն իրականացվել:</p>					
<p>5.Ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար անհրաժեշտ՝ հողերի օգտագործման մասին տեղական համայնքի որոշման կայացման համար 2-ամսյա ժամկետի պահպանում</p>	<p>Համայնքի վարչական տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար համապատասխան գրություններ չեն ստացվել:</p>					